

ՎԱՐԿԱՅԻՆ ՊՈՐՏՖԵԼԻ ԱՐԺԵԹՂԹԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ Ի-Ի
ՏՆՕՐԵՆՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ
ՈՐՈՇՈՒՄ

2016 թվականի փետրվարի 18-ի, թիվ 18.02.2016-01 L

«ՎԱՐԿԱՅԻՆ ՊՈՐՏՖԵԼԻ ԱՐԺԵԹՂԹԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ Ի-Ի ԿՈՂՄԻՑ ԱՆԿԱԽ
ԱՌԻԴԻՏՈՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ» ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Ակտիվների արժեթղթավորման և ակտիվներով ապահովված արժեթղթերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածը,

Ղեկավարվելով ՎԱՐԿԱՅԻՆ ՊՈՐՏՖԵԼԻ ԱՐԺԵԹՂԹԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ Ի-Ի կանոնադրության 22-րդ կետի 9-րդ ենթակետով,


ՎԱՐԿԱՅԻՆ ՊՈՐՏՖԵԼԻ ԱՐԺԵԹՂԹԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ Ի-Ի տնօրենների խորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է.

1. «ՎԱՐԿԱՅԻՆ ՊՈՐՏՖԵԼԻ ԱՐԺԵԹՂԹԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ Ի-Ի կողմից անկախ աուդիտորի ընտրության կանոնակարգը»՝ համաձայն հավելվածի (կցվում է):

Տնօրենների խորհրդի

նախագահ՝



Անահիտ Թադևոսյան

«ՎԱՐԿԱՅԻՆ ՊՈՐՏՖԵԼԻ ԱՐԺԵԹՂԹԱՎՈՐՄԱՆ
ՀԻՄՆԱԴՐԱՄ I»-ի տնօրենների խորհրդի
2016 թվականի փետրվարի 18-ի թիվ 18.02.2016-01 Լ որոշման

Արտաքին Աուդիտորական Կազմակերպության Ընտրության Կանոնակարգ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

- 1.1. Սույն Կանոնակարգը ներառում է «ՎԱՐԿԱՅԻՆ ՊՈՐՏՖԵԼԻ ԱՐԺԵԹՂԹԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ I» արժեթղթավորման հիմնադրամի կողմից անկախ աուդիտորական կազմակերպության ընտրության ժամանակ ներկայացվող պահանջները, չափանիշները, մրցութային առաջարկությունների գնահատման մեթոդը, մրցությունների կազմակերպման, անցկացման և արդյունքների ամփոփման կարգն ու ժամանակացույցը՝ դրանց կողիֆիկացման նպատակով:
- 1.2. Սույն Կանոնագրքում օգտագործվում են հետևյալ հիմնական հասկացությունները.
 - 1.2.1. **Հիմնադրամ՝** ՎԱՐԿԱՅԻՆ ՊՈՐՏՖԵԼԻ ԱՐԺԵԹՂԹԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ I արժեթղթավորման հիմնադրամ,
 - 1.2.2. **Կառավարիչ՝** Հիմնադրամի կառավարիչ՝ «Կապիտալ Ինվեստմենթս» ՓԲԸ,
 - 1.2.3. **Աուդիտորական խումբ՝** աուդիտորական կազմակերպության աշխատակիցների խումբ, որոնք անմիջականորեն ընդգրկված են Հիմնադրամի ֆինանսատնտեսական գործունեության աուդիտի իրականացման մեջ,
 - 1.2.4. **Պատասխանատու աուդիտոր՝** աուդիտորական կազմակերպության աուդիտորական եզրակացությունը ստորագրող աշխատակից,
 - 1.2.5. **Ֆինանսական կազմակերպություն՝** բանկ, վարկային կազմակերպություն, ապահովագրական ընկերություն, ներդրումային ընկերություն, ներդրումային ֆոնդի կառավարիչ:

2. ԱՆԿԱԽ ԱՌԻԴՏՈՐԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԸՆՏՐՈՒԹՅԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ԵՎ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

- 2.1 Հիմնադրամն ընտրում է այն աուդիտորական կազմակերպությունը, որը բավարարում է հետևյալ նվազագույն չափանիշներին.
 - 2.1.1 Ֆինանսական կազմակերպության աուդիտի իրականացման առնվազն 3 տարվա փորձ: Ընդ որում, այս չափանիշը չի տարածվում միջազգային ճանաչում ունեցող աուդիտորական կազմակերպությունների վրա,

- 2.1.2 աուդիտորական կազմակերպության պատասխանատու աուդիտորը պետք է ունենա ֆինանսական կազմակերպության աուդիտորի առնվազն 3 տարվա աշխատանքային փորձ և առնվազն 3 ֆինանսական կազմակերպության աուդիտի իրականացման փորձ և միջազգային հաշվապահական և (կամ) աուդիտորական որակավորման (օրինակ՝ ACCA (Association of Chartered Certified Accountants), CPA (Certified Public Accountant) կամ CISA (Certified Information Systems Auditor)) փուլերի (ստանալու պահին) առնվազն կեսը ավարտած լինելու փաստը հավաստող փաստաթուղթ (վկայական) կամ Հայաստանի հաշվապահների և աուդիտորների ասոցիացիայի կամ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից լիազորված մարմնի կողմից տրված աուդիտորի որակավորում,
- 2.1.3 աուդիտորական խմբում ներգրավված աշխատակիցների առնվազն կեսը պետք է ունենա աուդիտորական կազմակերպությունում առնվազն 3 տարվա աշխատանքային փորձ և Հայաստանի աուդիտորների և հաշվապահների ասոցիացիայի կամ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից լիազոր մարմնի կողմից տրված աուդիտորի որակավորում,
- 2.1.4 աուդիտորական կազմակերպությունը Հիմնադրամի հետ կնքվող պայմանագրում պետք է համաձայնություն տա ՀՀ կենտրոնական բանկի հրավերով մասնակցելու Հիմնադրամի, աուդիտորական կազմակերպության և ՀՀ կենտրոնական բանկի միջև արտաքին աուդիտի արդյունքների քննարկման համար կազմակերպվող եռակողմ հանդիպմանը:
- 2.2 Հիմնադրամի արտաքին աուդիտն իրականացնող անձի անդամ /ղեկավար/ չի կարող լինել Հիմնադրամի կառավարման մարմնի անդամը, Կառավարչի կառավարման մարմնի անդամը, ղեկավարը և աշխատակիցը, ինչպես նաև Հիմնադրամի, Կառավարչի և դրա ղեկավարների կամ այլ աշխատակիցների հետ փոխկապակցված անձը:
- 2.3 Անկախ աուդիտորական կազմակերպության ընտրության ժամանակ հաշվի է առնվում նաև Հիմնադրամի կամ Կառավարչի և տվյալ աուդիտորական կազմակերպության միջև առկա աշխատանքային փորձը, մասնավորապես՝ նախկինում վերջինիս կողմից Հիմնադրամին կամ Կառավարչին մատուցած աուդիտորական ծառայության որակը:
- 2.4 Հիմնադրամը անկախ աուդիտորական կազմակերպության ընտրության համար սահմանում է հետևյալ պայմանները՝
- աուդիտի ընդգրկման բնագավառները,
 - աուդիտի իրականացման և աուդիտորական եզրակացության ներկայացման ժամկետները,
 - աուդիտի իրականացման արժեքը,
 - այլ պայմաններ՝ Հիմնադրամի հայեցողությամբ, պարտադիր մրցույթի մասնակիցների համար:
- 2.5 Հիմնադրամը, հիմնվելով սույն կանոնակարգին կից Աղյուսյակ 1-ով սահմանված չափանիշների վրա, ուսումնասիրում է աուդիտորական կազմակերպությունների կողմից ներկայացված առաջարկությունները և գնահատում դրանք՝ նախապատվությունը տալով ամենաբարձր միավորներ հավաքած աուդիտորական կազմակերպությանը:

3. ԱՆԿԱՆ ԱՌԻԴՏՈՐԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ, ԱՆՑԿԱՑՄԱՆ ԵՎ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՄԱՆ ԿԱՐԳՆ ՈՒ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ

- 3.1 Հիմնադրամի կողմից անկախ աուդիտորական կազմակերպության ընտրությունն իրականացվում է մրցութային կարգով:
- 3.2 Անկախ աուդիտորական կազմակերպության ընտրության մրցույթի անցկացման վերաբերյալ հայտարարությունը պետք է հրապարակվի անցկացման ամսաթվից առնվազն 10 օր առաջ՝ նվազագույնը Հիմնադրամի կամ Կառավարչի ինտերնետային կայքում:
- 3.3 Անկախ աուդիտորական կազմակերպության ընտրության վերաբերյալ հայտարարությունը պետք է պարունակի հետևյալ տեղեկատվությունը՝
- մրցույթի կայացման տարին, ամիսը, ամսաթիվը և ժամը,
 - մրցույթի կայացման վայրն ու հասցեն,
 - մրցույթի անցկացման և հաղթողին որոշելու կարգը,
 - մրցույթին մասնակցելու անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը,
 - մրցութային առաջարկությունների ընդունման վերջնաժամկետը,
 - այլ էական պայմանները:
- 3.4 Եթե հայտարարությամբ սահմանված՝ մրցութային առաջարկությունների ներկայացման վերջնաժամկետին Հիմնադրամը չի ստացել որևէ առաջարկություն, ապա Հիմնադրամի Կառավարչի գլխավոր տնօրենի որոշմամբ մրցույթի անցկացման օրը հետաձգվում է ևս 10 օրով: Այդ որոշման հիման վրա հայտարարությունը թարմացվում է:
- 3.5 Աուդիտորական կազմակերպությունները մրցույթի առաջարկությունները ներկայացնում են երկու ծրարով, որոնցից առաջինում ներկայացվում է աուդիտորական ծառայության տեխնիկական, իսկ երկրորդում՝ ֆինանսական չափանիշների վերաբերյալ տեղեկատվությունը:
- 3.6 Մրցույթի անցկացման օրն առաջինը բացվում է տեխնիկական չափանիշների վերաբերյալ առաջարկությունների ծրարը:
- 3.7 Այն դեպքում, երբ առաջին ծրարում ներկայացված առաջարկը բավարարում է Աղյուսյակ 1-ով սահմանված տեխնիկական չափանիշներին, բացվում է երկրորդ ծրարը և գնահատվում են առաջարկի ֆինանսական չափանիշները, համաձայն՝ Աղյուսյակ 1-ով սահմանված ֆինանսական չափանիշների, հակառակ դեպքում՝ այն չի բացվում և ներկայացված առաջարկությունը համարվում է մերժված:
- 3.8 Մրցութային առաջարկի երկրորդ ծրարը բացելուց հետո գնահատվում է առաջարկն ամբողջությամբ՝ համաձայն Աղյուսյակ 1-ի:
- 3.9 Կառավարչի կողմից կազմվում է մրցույթի անցկացման վերաբերյալ արձանագրություն, որտեղ նկարագրվում են մրցույթի առաջարկները, գնահատականներն՝ ըստ աղյուսյակի, այլ տեղեկություններ, որն էլ հաստատվում է Կառավարչի գլխավոր տնօրենի կողմից՝ որոշման տեսքով:

- 3.10 Եթե մրցույթի արդյունքում ոչ մի կազմակերպություն չի բավարարում Աղյուսակ 1-ում սահմանված չափանիշները, Կառավարչի գլխավոր տնօրենի որոշմամբ հայտարարվում է նոր մրցույթի անցկացում:
- 3.11 Կառավարչի գլխավոր տնօրենի կողմից հաստատված արձանագրությունը ներկայացվում է Հիմնադրամի խորհրդին՝ մրցույթի արդյունքները և տարեկան աուդիտի իրականացման վարձատրության չափը որոշելու:
- 3.12 Հիմնադրամի խորհուրդը հաստատում է արտաքին աուդիտն իրականացնող կազմակերպությանը և հանձնարարում է կնքել աուդիտորական ծառայությունների մատուցման պայմանագիր:
- 3.13 Խորհրդի կողմից որևէ կազմակերպություն հավանության չարժանանալու դեպքում հայտարարվում է նոր մրցույթ, ընդ որում՝ խորհուրդը կարող է վերանայել մրցույթի՝ իր կողմից սահմանված պայմանները և սահմանել նոր պահանջներ ու չափանիշներ:

	Չափանիշ	Միավոր	Կշիռ, %	Ընդամենը	Մեկնաբանություններ (գնահատվում է եռաստիճան սանդղակով՝ 0-3 միավոր)
Տեխնիկական չափանիշներ	Տվյալ աուդիտորական կազմակերպության կողմից նախորդ տարում սպասարկված ՀՀ ֆինանսական կազմակերպությունների քանակը		100		<ul style="list-style-type: none"> 0 ֆինանսական կազմակերպություն – 0 մինչև 4 կազմակերպություն – 1 5-7 կազմակերպություն – 2 8 կազմակերպություն և ավելի – 3
	Տվյալ աուդիտորական կազմակերպության ՀՀ-ում և/կամ միջազգային ճանաչումը (հեղինակությունը)		90		<ul style="list-style-type: none"> աշխատում է միայն ՀՀ-ում – 0 իրականացնում է միջազգային գործունեություն, սակայն միջազգային ռեյտինգավորմամբ լավագույն տասնյակում չէ – 1 միջազգային ռեյտինգավորմամբ ընդգրկված է լավագույն տասնյակում – 2
	Տվյալ աուդիտորական խմբի անդամների կուտակային աշխատանքային փորձը		80		<ul style="list-style-type: none"> մինչև 3 տարի – 0 3-5 տարի – 1 5-10 տարի – 2 10 տարի և ավելի – 3
	Աուդիտի աշխատանքային խմբի ղեկավարի որակավորումը		80		<ul style="list-style-type: none"> մրցութային առաջարկների մեջ ամենաբարձրը – 2 մյուս առաջարկները – 1
	Աուդիտի աշխատանքներին մասնակցող աշխատակիցների թվում (ACCA, CPA, ՀՀԱԱ կամ այլ) որակավորման վկայականներ ունեցող աշխատակիցների քանակը		80		<ul style="list-style-type: none"> 1 աշխատակից – 1 2 աշխատակից – 2 3 աշխատակից և ավելի – 3
	Տվյալ աուդիտորական խմբի կուտակային աշխատանքային փորձը ֆինանսական կազմակերպությունների աուդիտի ոլորտում		80		<ul style="list-style-type: none"> մինչև 3 տարի – 0 3-5 տարի – 1 5-7 տարի – 2 7 տարի և ավել – 3
	Աուդիտի անցկացման ժամկետները՝ առաջին այցելությունից մինչև վերջնական եզրակացության ներկայացումը		60		<ul style="list-style-type: none"> 4 ամսից ավելի – 0 3-ից 4 ամիս – 1 2-ից 3 ամիս – 2
	Տվյալ աուդիտորական կազմակերպության հետ համագործակցության փորձը		70		<ul style="list-style-type: none"> համագործակցության բացակայություն – 0 նպատակային ծառայությունների մատուցում – 1 1 ֆինանսական տարվա աուդիտ – 2
	Աշխատանքների ձախողման կամ պայմանագրով ամրագրված պարտականությունների չկատարման ռիսկի ապահովագրումը՝ ռիսկերի բավարար փոխհատուցման պահանջի տեսքով		70		<ul style="list-style-type: none"> դրույթի բացակայությունը – 0 մասնակի բավարարման դրույթի առկայությունը – 1 ամբողջական բավարարման դրույթի առկայությունը – 2
	Ընդամենը միավորներն՝ ըստ տեխնիկական չափանիշների	X	X		
Խորհրդատվական չափանիշներ	Աուդիտի ծառայության արժեքը		100		<ul style="list-style-type: none"> ամենաբարձր արժեքը – 0 2-րդ բարձր արժեքը – 1 3-րդ և ավելի ցածր արժեքները – 2

	Աուդիտի ծառայության արժեքից կանխավճարի վճարման դրույթի առկայությունը պայմանագրում		50		<ul style="list-style-type: none"> • 51% և ավելի – 0 • 31-50% – 1 • մինչև 30% – 2
	Ընդամենը միավորներ՝ ըստ ֆինանսական չափանիշների	X	X		
	Վերջնական միավոր	X	X		